

ԵՓՐԵՄ ՏԵՐ-ԾԱՐՑԻՐՈՍՆԵԱՆ

ՔԱՂՑԻ ՕՐԵՐԻՆ

ԴՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ  
ԻՐԱ ԵՒ ՄԱՆԳԱՆ

Խ. ՀԱՅ ԳՐԱԿ.-ԳԵՂ.  
ԴՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄՈՍԿՎԱ 1923

-0 NOV 2011

891.90

ԱՆ-46

ԵՓԲԵՄ ՏԵՐ-ՄԱՐՑԻՐՈՍԵԱՆ

Կ/

# ՔԱՂՑԻ ՕՐԵՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ  
«ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱՆԳԱՆ»

ՄՕՍԿՎԱ 1923

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



692  
43

Ամեն օր երեկոները 10 Զագոսկինը լիա-  
յոյս կայարան էր գնում, երկար սպասում ու  
սրտարեկ յետ գտիս:

Միշտ միևնույն մտքի մերժ մերթ տաճնջւում,  
մերթ մխիթարւում, մերթ ինքն իրեն յոյս տա-  
լիս ու մերթ լբւում էր:

Այսօր էլ գնաց, կանգնեց իր սովորական տե-  
ղը - սիւնի տակ: Երբ գնացքը սրընթաց ու հերին  
կայարանին մօտեցաւ, նրա սիրոն ուժգնորէն  
սկսեց բարախել:

— Գուցէ այս անգամ երեա, գուցէ տեսնեմ,  
գուցէ հանգիպենք:

Գնացքը կանգ առաւ: Եկորները վագոննե-  
րից գուրս թափւեցին: Նա առաջ անցաւ: Ան-  
դուխքներից իջող ձամբորդներին էր զիտում,  
սրան ու նրան հրելով առաջ գնում, յետ գալիս:  
Ժխորը լսեց, կայարանը պարպւեց և իր սովո-  
րական տեսքն ստացաւ: Իսկ նա, որին սպա-  
սում էր սրտատրոփ, չկար:

Մտամոլոր ու խեղճ՝ նա անցաւ բուֆետի

~~Ա Հ Վ Վ Վ Վ Վ~~  
բաժանմունքը: Այդտեղ էր մեկնող գնացքի սպասող բազմութիւնը, այդտեղ էին նաև կայարանի անկոչ հիւրերը—ցնցութիւների մէջ թաղւած կմախք-մարդիկ, որ փախել էին վոլգայի ափերից:

Ոմանք ճաշում էին, ոմանք թէյ խմում, ոմանք ուրախ զրուցում. միայն կմախք-մարդիկն էին, որ երերալով դառնում էին ~~առողների~~ շուրջն ու պատառներ մուրում:

Կայարանի ծառան եռանգով ~~հալածում~~ էր նրանց, սպառնում, յանդիմաներիվ գուրս անում, բայց նրանք միւս զոնից ներս էին խուժում, ցրում դահլիճում և վզերնին ծռած՝ ձեռք պարզում մարդկանց:

Երեք հոգի, որ Մոսկվա ապրանք էին փոխազրում վաճառքի համար, պատուհանի մօտ իրենց ճամպու պաշարը բացած՝ վայելում էին ինքնագոն:

Մօտ եկաւ մի պատանի:

— Քի՞՛. կարօտել էինք, ուշացար, մի քիչ շուտ գայիր էլի՛:  
— Մի կտոր, քեռի, միայն մի կտոր:  
— Դէ՛, հեռացի՞ր:  
— Երկրորդ օրն է, ոչինչ չեմ կերել, անօթի եմ:

1-15

Նա աւելի մօտ եկաւ:

— Ո՞ւր ես խցկում, շան լակոտ, յետ գնաթէ չէ...

— Մի կտոր տուր իրեն, թող անցնի գնա, միւնոյն է ձեռք չի վերցնելու:

— Թող գնա զրա... անվերջ տալ կլինի՛: Զեն թողնում, որ մարդ մի հանգիստ սրատվ հաց ուտի:

— Քեռի...

— Է՛, զլիներիս հարամ պիտի անի էլի՛...  
առ:

Պատանու փոս ընկած աչքերը վայրկեանաբար փայլատակւեցին. իրեն պարզած հացի կտորը խլեց, յետ գնաց ու կլից: Այդ միջոցին սեղանների տակ վխտացող շներից մէկը մօտ եկաւ, յետին թաթերի վրա կանգնեց և սկսեց տուածի թաթերով համաչափ շարժումներ կատարել՝ առես մէկին կանչելիս ~~լինէր~~: Ճամպորդները նայեցին ու լի բերնով կռւշա ծիծաղեցին:

— Մեր տղա, սրա փորն էլ է վեց-վեց անում: Բայց ինչ խելօքն է երկում:

— Այ այգպէս, գուշա քաղաքավարի ես. քեզ չի կարելի մերժել... առ...

Ճւարճախօսը մի խոշոր մսալի ոսկոր նետեց շանը, որ բերանն առնելով դուրս վազեց:

— Ի սէրն Քըիստոսի...

— Ընը՛, մէկից հազիւ պրծանք, միւսը մօտեցաւ... Տօ՛, տօ՛, մի էն կողմը նայիր է, վա... էսպէս էլ աներեսութիւն. տօ՛, տես է՛, չնոն խնդրում, այլ խլում են:

Բուգեափի սեղանների շուրջը սպասաւորը մաքառում էր երկու գեղջուկ ուռած դէմքով կանանց հետ, որոնք մի-մի խոր ափսէ վերցրած՝ լիզում էին կերակրի աւելցուկը:

Վրա հասաւ միւս սպասաւորը, որի բռունցքն իջաւ կանանցից մէկի շլինքին: Կինը ցնցւեց, ափսէն ընկաւ ու ջարդուփշուր եղաւ:

— Դուքս զնացէք, անամօթներ, քիչ է մնում, որ խոհանոց մանէք ու կերակրի կաթսան թշոցնէք...

— Դուքս արէք զբանց, դուքս արէք. բաւական է, ինչ են շարունակ սեղանների շուրջը վիստում, հրամայեց աւագ սպասաւորը:

Միւս կինն ըզդիմանում էր, նրանք վիճում էին: Իվան Զագոսկինը, որ մինչ այդ իր մտքերի մէջ էր խորասուզւել, սթափւած՝ դիտում էր տեսարանը: Առփեալներից մէկը մօտեցաւ ու սկսեց պաշտպանել կնոջը: Տաքսցան. սպասաւորը վերստին իր բռունցքի օգնութեան զիմեց:

Առանց իրեն հաշիւ տալու՝ իվան Զագոսկինը դէպի սեղանները նետուեց և մի հալւածով սպասաւորին յետ մղեց.

— Անսիրտ, արտասանեց նա գունատւած: — Յանցառ, քո սիրտը ցաւում է, տար և կերակրիր:

— Այդ իմ դորձն է, իսկ դու քեզ քաշիր սեղմած բռունցքը, զըտ ժամանսկին անցել է անդարձ:

— Անցել է անդարձ... տեսնում եմ, ձերնցից է...

— Լեզուկ քեզ քաշիր և ամաններդ հաւաքիր սուս ու փուս:

Իրալանցում ընկաւ: Կայարանի միլիցիոները միջամտեց, կարգը վերականգնեց, ոչ ճամապորդներին ինսպրեց հեռանալ:

Զագոսկինը վրդովւած միւսների հետ դուրս եկաւ, տիրուր նայեց շուրջն ու բռնեց իր բնակարանի ճամպան:

— Զկա, չերեկաց:

Մաքով սլացաւ դէպի իր հայրենի գիւղը, վերապրեց վերջին խուճապը, որ առաջացաւ սովից... Բորբը, բոլորը թողած տուն-տեղ՝ փախչում էին: Ինքն էլ վերցրեց պառաւ մօրն ու բրոջը՝ կիզային և ուղղեց դէպի հարաւ:

Նրա տուած վայրկեանաբար պատկերացան երաշտից այրւած արտերը, ճաքճքած հողը... ապա ֆիզիքապէս հիւծւած մօր նւոցը... Նա

չկարողացաւ դիմանալ, մեռաւ կէս ճամպին։  
Վերյիշեց անձանօթ կայարանի ժխորը, գնաց-  
քի յանկարծակի մեկնումը գիշերին. քրոջն այդ-  
տեղ կորցրեց։ Յաջորդ օրը բոլոր վազոնները  
պատեց, քոյրը չկար...

Իվան Զագոսկինը մի խոր կոկիծ զգաց իր  
հոգու խորքում։ Քոյրն անփորձ էր, գեղջկուհի,  
միամիտ ու երկչուս։

Այսպէս դառը մաքերով պաշարւած՝ նա առևն  
հասաւ ու շորերով պառկեց։

\* \* \*

Նորմոր սկսում էր լուսանալ։ Մըսելուց Զա-  
գոսկինը դարձնել էր, կուչ եկել ու միտք էր  
անում։ Կարիքի նոր օր էր սկսում նրա համար։  
Ինքը արհեստով ատաղձագործ, երկար ժամա-  
նակ աշխատանք փնտրեց օտար քաղաքում, բայց  
չգտաւ։ Իր բոլոր գործիքները մէկ-մէկ կէս-դնով  
ծախեց ու կերաւ։ Մնացել էր իր փոքրիկ կուսնը։  
Այսօր էլ նա պիտի վաճառէր։

— Այսպէս ապրել չի կարելի. այսպէս շա-  
րունակել անհնարին է։ Մի ելք, մի հնար, մի  
ճար պէտք է փնտրել…… Ինքն առողջ է, աշխա-

տանքի ընդունակ, բայց գործ չկա. ի՞նչ անէ,  
ում զիմէ այս քաղաքում։

Այսպէս մտահոգւած նո տեղից վերկացաւ,  
բերնի շնչով մրսած ձեռները տաքացրեց, լւա-  
ցւեց, վրայի հագուստն ուղղեց ու դէպի շուկա  
ուղղւեց։ Այսօրւա նրա միակ յոյսը իր կուսն  
էր—փոքրիկ սիրած կուսնը, որի հետ նա երկար  
ամրիներ աշխատանքի ախորժ ժամեր էր ապրել։

Փախստական սովեաների նոր հոսանքը հե-  
ղեղել էր շուկան. ծեր ու ջահիլ, մեծ ու փոքր,  
բոլո՞րը, բոլո՞րը մուրսում էին։

Զագոսկինի ուշագրութիւնը ակամայից գրա-  
ւեց ցնցոտիածածկ բոկոտն ու զիսարաց մանուկ-  
ների մի խումբ յօյն հացավաճառի խանութի  
առաջ… Ցեխի մէջ հրհրում էին իրար, դռան  
շէմքի մօա երկչուս քայլերով առաջ շարժւում,  
ներա խցկւում, գնորդներին վտիտ ձեռներ պար-  
զում։

— Քեռի, ա՛ քեռի, մի կտոր հաց, միայն  
մի կտոր, մի փոքրիկ կտոր, անօթի եմ…

— Ինձ էլ, ինձ էլ…

Ու մանուկների խումբը կրկնում էր միա-  
ձայն։

— Ինձ էլ, ինձ էլ…

— Դէ, հերիք է էլի, ամեն օր առև կլինի,  
հեռու կացէք, ճամպա տւէք…

— Մի կտոր, ի սէր Աստուծոյ, մի փոքրիկ,  
փոքրիկ կտոր...

Աղերսող մանուկները շէմքի մօտ պաշարել  
էին գնորդներին ու թոյլ չէին տալիս դուրս  
դալու:

Հացավմառը չարացաւ.

— Զահլա տարտք էլի, ուն... ինձ էլ, ինձ էլ...

— Դէ նստենք ու ամբողջ օրը ձեզ համար  
հաց թխենք էլի... դուրս կորէք, թէ չէ...

Նա բարձրացրեց անկիւնում դրած խողանաւ-  
կը և ուզում էր կոթով հարուածել:

Մանուկները կծկւեցին ու դուրս եկան:

Հացավմառը դուռը ծածկեց...

Թրսից լուռում էր մէկի հեղինակը.

— Ի՞նձ էլ, ինձ էլ, բա ե՞ս ինչ պիտի ու-  
տեմ, բաւական է էլի... ձեր տեղը շա՛տ...

Եղանակը զգալիօրէն ցրաեց: Խոշոր փաթիւ-  
ներով ձիւն էր դալիս:

Զագոսկինը քրոջը յիշեց և լնկճւած առնող-  
գնող մարդկանց բազմութեան մէջ միքանեց...

Սկսող գործազրկութիւնը շատ-շատերին շուշ-  
կա էր քշում... Նրանցից ոմանք ձեռքի տուսու-  
րը դարձրել էին մշատկան զբաղմունք, ոմանք  
տան եղած աւելորդ շարժական կայքն էին վա-  
ճառքի հանել՝ հացառատ շրջաններ գնալու հա-

մար, շատերն էլ հարկից ստիպւած ծախում էին,  
ինչ որ հսարաւոր էր՝ յուսալով, որ երբեկցէ նոր  
դրադմունք կունենան:

Հացի գինն աճում էր օրէցօր, սովի ուրւա-  
կանը սարսափեցնում շատերին:

Մինչև կէսօր Զագոսկինը շուկայում մնաց:

Ոչ ոք նրանից կունի գին չհարցրեց:

Յուսախար, դժգոն նա լրեց բազմազան լի-  
զուների տաղակալի մխորն ու հեռացաւ շու-  
կայից...

Ճամպին նա կանգնեց ու միաք արտւ... ուր  
է գնում: Տնեն. բայց տանը ցուրտ է և ուտելու  
էլ ոչինչ չկա, էլ ինչու է շտապում: Ուր գնալ,  
ուր գնալ...

\* \* \*

Քաղաքի յետ ընկած թաղերից մէկումն էր  
գանւում իվանովի բնակարանը, որի դուռը ձա-  
շի ժամանակ Զագոսկինը սկսեց բաղիւլ: Քաղցը  
սկսել էր զգալ տալ իրեն: Բայց վատ էր զգում  
իրեն, շատ վատ: Անյարմար է, ճաշին մարդ-  
կանց այցի չեն դնում, ինչ կասեն, ինչ կմտա-  
ծեն իր մասին:

Գուռը բացւեց, տասներկու տարեկան մի

աղջիկ նայում էր նրան ու աչքերը արագօրէն  
թարթում:

— Հայրիկդ տանն է...

— Հա... մամաս հիւսնդ է... զիշերը երդում  
էր... հայրիկս չքնեց:

Զագոսկինն առաջ անցաւ ու զիմացի սե-  
նեակի գուռը բանալով՝ մի քանի վայրկեան մնաց  
կանգնած:

Իվանովը կնոջ մահճակալից քիչ հեռու ար-  
մանկով աթոռի թիկունքին յենւած՝ լուս ար-  
տաւում էր, իսկ կինն անկողնում վերմակը մի  
կողմ նետած՝ զառանցում էր տաքութեան մէջ:

Հինգ տարեկան փոքրիկ տղան ստաբորիկ  
մահճակալի ստի մօտ կանգնած՝ քաշում էր աղ-  
տու վերմակի ծայրն ու կրկնում.

— Մամա, մամա...

Իվանովը Զագոսկինին նկատելով խկոյն դէմ-  
քը հակառակ կողմը շրջեց, աչքերը սրբեց ու  
նրան ներս հրաւիրեց:

— Այս ինչ է պատահել:

— Տիֆ է... տունս քանդւում է... քանդում:

— Բժիշկ հրաւիրել ես:

— Ել չի գալիս...

— Ինչու:

— Բնակարանը հեռու է, ասում է, ձամպան  
ցեխոտ, վարձս քիչ է... չեմ կարող:

Տիրեց լոռութիւն, որ լնդհատւում էր զառան-  
ցող հիւսնդի անկապ խօսքերով:

Իվանովը նորից արտասաւեց.

— Չոնիմ, ի՞նչ անեմ, չունիմ, ձեսս պա-  
կաս է: Մեծ որդիս պատերազմում սպանւեց:  
Մասցածները փոքր են... թանգութիւն է... հա-  
զիւհազ ծայրը ծայրին եմ հասցնում, օր է լի-  
նում, որ...

— Տղամարդ կաց, ի՞նչ ես կինարմատի նման  
տչքերդ հուզ տալիս: Կին է, հիւսնդացել է,  
կլաւանաս: Լսիր, իսկ եթէ ուրիշ բժիշկ կանչենք:

— Ապա ծախսը:

— Նա ձրի է բժշկում: Ռումեանցեվը բայո-  
նական բժիշկ է—«Ասողջբաժնից» նշանակւած:

— Կդա...

— Ինարկէ, կդա:

— Մի անգամը քիչ է... միշտ պիտի գա:  
Կհամաձայնի, ասում են, նա գործ շատ ունի:

— Կդա, զբա մասին մի մասձիր: Ես հէնց  
հիմա կգնամ նրա մօտ՝ խնդրելու, որ իսկոյն գա:  
ես էլի կդամ, երեկոյեան...

Զագոսկինը փողոց դուրս եկաւ և արագ քայ-  
լերով դէպեց գէպի բայոն. բժշկի բնակարանը,  
իր քաղցը մոռացել էր. Իվանովի մասին էր  
մտածում:

— Խեղճ, խեղճ, ի՞նչ կլինի նրա զբութիւնը,  
եթէ կինը յանկարծ մհանիւ: Արդէն յուսահատւել  
է: Նա սկսեց առելի արագ քայլել և շուտով  
բժշկի տանը համնելով՝ հեալով սեղմեց զանգի  
կոճակը:

Շիկահեր ու նրբակազմ, բարի դէմքով մի ե-  
րիտասարդ կին գուսը բաց արաւ:

— Համեցէք:

— Բժիշկը տանն է:

— Ոչ, շուտով կգա, ասացէք ես գալուց  
կհաղորդեմ իրեն:

Կարմիր փողոցի № 5 տանը ծանր հի-  
ւանդ կա... Բարեկամիս կինը... տիֆ է... զա-  
ռանցում է... խնդրում եմ, շատ եմ խնդրում,  
որ բժիշկը գալուց այցի գնա. կասէք հա, չէք  
մոռնալ:

Զագոսկինը խօսում էր յուզւած ձայնով:

— Ըսկեր, անհոգ կացէք, շուտով կգա և  
անմիջապէս կայցելի:

— Ներեցէք. նեղութիւն տւի, ստիպւած էի:

— Ոչինչ, ոչինչ ընկեր, ի՞նչ նեղութիւն:  
Գա ամուսնուս պարտականութիւնն է: Ես կա-  
սեմ, որ առաջին հերթին գա:

— Յակառութիւն. շնորհակալ եմ, շնորհա-  
կալ եմ...

— Զարժէ, յուկառութիւն, պատասխանեց բժշկի  
կինը՝ մեղմօրէն ժպտալով:

Գոհունակութեան մի զգացում շոյեց նրա  
սիրուց: Այն միաքը, որ այս վատթար պայման-  
նելում կարողացածին չափ օգնութեան հասաւ  
իր հայրենակցին—հոգին պարուրեց անսահման  
բերկրանքով:

— Իսկ եթէ բժշկի օգնութիւնն ուշացած լի-  
նի... «Բնակարանը հեռու, ձամպան ցեխուտ,  
վարձու քիչ է»: Հու, անիրաւ քարասիրու, ան-  
խիղճ...

Բայց ի՞նչ լաւ ընդունելութիւն ցոյց տւեց  
բումեանցեվի կինը... որքան սիրալիր էր... Այ-  
քեզ մարդ: Եւ խոսառումը. կգա, խսկոյն և եթ  
կայցելի... մի անհանգստանաք, լնկե՛ր... նա  
իրեն «ընկեր» անւանեց:

Զագոսկինի յուզմունքն անցաւ: Կասկածնե-  
րը տեղի տեին խոր հաւատի: Դանդաղ քայլերով  
նա կտրեց վերելքի ձամպան, դուրս եկաւ ըլլի  
գտգաթը ու նստեց: Ի՞նչ որ թուլութիւն տիրեց  
նրա մարմարին: Նորից ուտելու պահանջ զգաց:

Սյլես ձիւն չէր գալիս, եղանակը պարզւել  
էր ու ստաքացել: Զագոսկինի առաջ փռող հե-  
ռուոր տափաստանները շողշողում էին ձմբան  
արկի ցուրտ ձառագայթների տակ:

Երկար ժամանակ նա մնաց նստած միտք  
անելիս։ Արեր թեքւել էր դէպի արևմուտք և  
շուտով մայր պիտի մտներ։

Նա ձեռքով ճակատը շոյեց և, վայրկեանա-  
րար իր տանջող մտքին լուծում տալով տեղից  
վերիացաւ ու դիմեց դէպի շուկա։

Հացավաճառների խանութների շարքին հաս-  
նելով նա կանգ առաւ մի քանի վայրկեան, ա-  
պա առաջ անցնելով դիմեց յոյնին։

- Երկու ֆունտ հաց։
- Սև թէ ձերմակ։
- Ճերմակ։

Մինչև յոյնը հացն էր կշռում, նա սկսեց գըր-  
պանները պըպտել։ Նախ վերարկուինը, ապա  
անցաւ բաճկոնակին, վերջը անդրավարտիքին։

Հացը վաղուց պատրաստ էր։

— Վա՞յ... միթէ մոռացել եմ... այ քեզ  
բան։

Նա նորից բաճկոնակի գրպաններին դիմեց։

Յոյնը ձեռները մէջքին շղթայած՝ սպառում  
էր...

— Մոռացել եմ հետո փող վերցնել։ Ասա-  
ցէք, խանութները շնուռ պիտի կողպւեն։

— Հինգտասը ըսպէից յետո։

— Օ՛, չեմ հասնի, վստահացէք ինձ. վաղն  
առաւօտեան կվճարեմ։

— Ապառիկ ոչ ոքի...  
— Այս երեկո անհաց մնա՞մ։  
— Ի՞նչպէս ուզում էք, իմ ի՞նչ գործն է.  
— Միթէ կարծում էք, որ խոստումս չեմ  
կատարի։

— Ի՞նչպէս հաւատամ, քանի որ ձեզ չեմ  
ճանաչում, ով էք զուք, ես ի՞նչ իմանամ։

— Մարդ եմ։

— Հը, մա՞րդ եմ... քեզ պէս մարդ շա՞տ...  
չեմ կարող։

Զագոսկինը ներքին ամօթից կարմրած՝ նա-  
յում էր հացավաճառին և չգիտէր ինչ տաել...

— Ուրեմն չէք տալիս։


— Ո՛չ.

Դամնացած նա շուռ եկաւ ու հեռացաւ շու-  
կայից։ Գնում էր, ինքն էլ չգիտենալով թէ դէ-  
պի ուր։ Քայլում էր յուզւած, ամօթահար։

— Հը, քեզպէմներին վաղուց եմ ճանաչում,  
խաբել չեմ կարող, քթի տակ ինքն իրեն մըրթ-  
մըրթաց յոյնը։

— Պօպանդապուլօ, ի՞նչ էր ասում, հարցրեց  
հարկանը։

— Հետո փող չեմ վերցրել, հացը տուր, տ-  
ուռում է, վաղը կրերեմ. ի՞նչ էլ մարդ է զտել  
պիլին խաղ խաղալու։



— Համա ի՞նչ ախորժակով կուտէ՛ր... համա-համա...

Երկու հարևանները հեգնօրէն հոհուացին...  
Իրիկնաժամին նա վերստին դէպի իվանովի  
բնակարանն ուզուեց: Լերմոնտովի հրապարա-  
կում էլեքտրական առատ լոյսերով ողողւած շքեղ  
կաֆէ-ճաշարանի առաջ կանգ առաւ յանկարծ:  
Նայում էր ու չէր հաւատում...

— Քոյրիկ, քոյրիկ... բայց ի՞նչպէս... ե՞րբ...  
ո՞րտեղից...

Ճերմակ գոգնոցով շիկահեր սպասուհին, որ  
շարունակ դարնում էր սեղանների շուրջը, գե-  
րել էր Զագոսկինի հայեացքը, այնքան էր նման  
իր քըոջը, այնքան նման: Զագոսկինը մերթ կըուա-  
նում էր, մերթ բարձրանում՝ ճիգ անելով սպա-  
սուհուն լաւ դիտելու-ճանաչելու, բայց քրտնած  
ապակիները խանգարում էին: Նա մի քանի վայր-  
կեան տատանուեց, ապա սիրտ արտու ու ներս  
մտաւ:

Թողում էր նորաբաց կաֆէն: Առատ սեղան,  
նւագ, երգ ու պար, մեղկ մարդիկ, որ զինուն  
անձնուուր՝ հալածւած օրերն էին վերապրում:

Բռափօ՛, ուռա՛... ջութակահարին մի բա-  
ժակ գինի... արայ-լայ-լայ... նւագ... նւագ...

Կաֆէի տէրը իսկոյն նկատեց հնամաշ հա-

գուստով մարդուն... Ահակոչ հիւր էր կոկիկ կա-  
ֆէի համար, խորթ, տարօրինակ իր արտաքինով:

— Ի՞նչ էք ուղում, դէս կացէք, դուք կըտ-  
րել էք միջանցքը:

— Քըոջս:

— Զեր քըոջը...

— Այո:

— Ո՞րն է:

— Հիմա կգա: Ահա...

— Մարի, Զեր եղբայրը, արտասանեց նա  
հեգնանքով:

Օրիորդը սաից գլուխ զննեց նրան...

— Ես սրտ քոյրը... Համամամ. սա խելտու է  
կամ ցնդւած:

— Ներեցէք: Ես... ես սիսալւած եմ... այն-  
քան նման էիք նրան, այնքան նման, որ մի բու-  
պէ ես: մոռացա ինձ, ներս մտա: Այս զուք շատ  
նման էիք նրան: Այժմ ես խարւած եմ: Ես նրան  
կորցրի... Անհետ կորցրի...

— Գինի... արա-բան-բան-բան...

— Բաժակները քամել...

— Իսկ գուք սրտեղից էք, հարցրեց օրիորդը  
լըջացած:

— Վոլգայի ափերից...

— Ե՛, հասկացա... Սովետաներից էք,

— Մարի, հաց ձախ սեղանին:  
 — Հիմա, հիմա:  
 Բեմի վրա պար սկսւեց:  
 — Եյ, ցանցառ միրուք, դէն կաց, խանգարում ես, նկատեց մօտակա կոնծած սեղանակիցներից մէկը:  
 — Առեք ու գուրս գնացէք, յաճախորդներս դժգոհում են, ասաց կաֆէտէրը՝ ինչ որ թղթադրամ պարզելով Զագոսկինին:  
 — Ես մուրացկան չեմ... իսկոյն:  
 Կորած քըոջը տեսնելու աճող կարօտը սըրտում, նա դուրս եկաւ դւարձացող կտփէից և գանդաղաքայլ ճամպան շարունակեց:  
 Մութ ծառուղում, ինչպէս միշտ, այս անզամ էլ մթութեան մէջ ձեռներ պարզեցին Զագոսկինինին:  
 — Բարի մարդիկ, գթացէք, սոված ենք, հացի փող տւէք,  
 — Մանուկներս նւաղում են, օգնեցէք:  
 — Երկրորդ օրն է, անօթի եմ:  
 Սրանք տեղացիներ էին, որոնց աճող թանգութիւնը, անակնկալ կարիքը մուրացկանութեան դիրին էր նետել, ծերեկով ամաչում էին: Մութնիջում էր թէ չէ, յայտնում էին - իւրաքանչիւրն իր սովորական տեղում և մինչև ուշ գիշեր անցնողդարձողին ուղղում իրենց աղերսը:

\* \* \*

Այդ գիշեր իվանովի կնոջ ճգնաժամն էր: Բայոնական բժիշկն այցելեց, ուշադրութեամբ քննեց, պատւէրներ տւաւ, ու գնաց: Առաւօտեան վաղ նորից պիտի գար:

Անքուն գիշերներ անցկացրած իվանովը ուժապառ էր եղել: Հայրենակցի առաջարկութեամբ պառկեց հանգստանալու, իսկ Զագոսկինը հերթապահի դերի մէջ մտաւ: Բժշկի տւած պատւէրները կատարում էր ամենայն ճշտութեամբ ու ցաւած սըտով հետեւում հիւանդ կնոջ մաքառութերին: Ողջ գիշերը նա աչք չխփեց: Լուսաբացին հիւանդն աւելի ծանրացաւ, նրան թւում էր թէ շնչառութիւնը ծանրանում է: Ուզեց ամուսնուն զարթեցնել, բայց տատանուեց, որոշեց քիչ էլ սպասել:

— Միթէ հոգեարք է, միթէ հոգեարք է, կրկնում էր նա մտքում:

Յանկարծ գուռը մէկը բաղխեց:  
 Իվանովը տեղից վեր թռաւ, վազեց ու բաց արաւ:

Բժիշկն էր: Մօտեցաւ բարեեց, հիւանդի զարկերակը շօշափեց, երկար քննեց: ապա ուրախացած դիմեց ամուսնուն.

— Նու, լնկեր, վտանգն անցած է, տաքու  
 թիւնն իջնում է, հիմանա հանգիստ քուն կլինի:  
 Լաւ խնամեցէք, ես կշարունակեմ յաճախել, մին-  
 չև որ կատարելապէս առողջանա: Առ այժմ ցտե-  
 սութիւն: Շտապում եմ, հիւանդներ շատ ունիմ:  
 — Այ իսկական բժիշկ:  
 — Դու տեսնէիր թէ երէկ կին ինձ ինչպէս  
 ընդունեց:  
 — Քաղաքում, նրան շատ են յարգում չքա-  
 ռոր մարդիկ:  
 — Տարիներ առաջ նախկին կառավարութիւ-  
 նն նրան հալտծում էր...

Իվանովը յանկարծ գրկեց Զագոսկինին և ու-  
 րախութիւնից լաց եղաւ:  
 — Դուք փրկեցիք ինո՞յս կեանքը— դու հնա: Առանց ձեզ ես կորած էի: Շնորհակալ եմ, շնոր-  
 հակալ եմ...

— Զգիտեմ, չզիտեմ թէ ինչպէս շնորհակալ  
 լինիմ երկախց:

— Հանգստացիր, մենք մեր պարտքը կա-  
 տարեցինք: Գուցէ երբեցէ քեզ վիճակւի ան-  
 ծանօթ մի ուրիշին օգնել, դա ել քո պարտքը  
 կլինի: Մեզ նմանները ուրիշ օրէնք չունին: Մենք  
 բոլորս ապրում ենք և պիտի ապրենք իրար հա-  
 մար: Դու, նա, ես և մեզ նմանները ամենքս,

ամենքս մօտ ենք իրար: Բո ցաւն իմն է, իմ  
 ուրախութիւնը քոնը, բժշկի հոգսը մեր երկախնը:

Նագեժդան—Իվանովի կինը բոլորովին առող-  
 ջացաւ: Զագոսկինը դարձել էր տան անդամնե-  
 րից մէկը: Յերեկները երկառվ գուրս էին դալիս  
 աշխատանքի— վայտ էին սղոցում հիմնարկու-  
 թիւնների և մասնաւոր մարդկանց համար, իսկ  
 իրիկնաժամին յոգնած-վաստակած վերադառնում  
 տուն, ուր սպասում էին նրանց սեղանի վրա  
 թշշացող ինքնաեռը, կազդուրւած տանտիրու-  
 հին ու հանգստի խաղաղ երեկոն:

Զգայուն տամնտիկնոջ աչքից չէր վրիպում,  
 որ Զագոսկինն օրէցօր աւելի ու աւելի էր տըխ-  
 րում, դառնում լուսկեաց... Նա մտածում էր  
 իր կորած քրոջ մասին:



«Ազգային գրադարան



NL0375035

Գլազիտ № 4087

Տираж 450 экз.

Tipografiya Mosk. Armani. Liter.-Khudoz. Kruzhka  
Armanijskij per., d. 2. Telefon 2-78-28.

58470

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
«ՄՈՒՐՃ ԵՒ ՄԱԿԱԴՐ»

ԽՈՎ ԽՈՎ 1923

ԼՈՅՍ ԵՆ ՑԵՍԵԼ

- Ուստ Ոյտմէն «Բանաստեղծութիւններ»  
 Գ. Հայկոնի «Գիշերային թիթեռնիկ»  
Խորհ. Հայաստանի Յեղափոխ. տարեդարձին.  
ՏԵՐ-Մարտիրոսեան «Քաղցի օրերին»  
Գ. Պետանով «Գեղարւեստը եւ հասարակական կեանքը»

ՏՊԱԳ/ԻՈՒՄ ԵՆ

Մարսիմ Գօրկի «Մայրը»

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- Ա. Բոգդանով «Խնժիներ Մէննի  
 Ա. Բոգդանով «Կարմիր Աստղ»  
 Գ. Ռւէլս «Կոյրերի երկիրը»  
 Փ. Էնգելս «Լիսդվիգ Փէյերբախ»  
 Ստալին «Ազգային հարցը»

տես

891.99

Մ - 46